ՕԴԵՍԱՅՈՒՄ ՕՐՀՆՎԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ԽԱՉՔԱՐԸ

Արդեն քանի տարի հայ ժողովուրդն իր խոնարհության ու երախտիքի խոսքը, քարեղեն լեզվով ու անմահ Պատարագների շնորհիվ, կտավների ու բանաստեղծության տեսքով, հնչեցնում է Երկիր մոլորակի տարբեր ծագերում՝ մեկընդմիշտ հավաստելով, որ հայն անմահ է, ու որքան էլ տանջեն, հալածեն, սպանեն, միևնույնն է, հեքիաթային փյունիկի պես կրկին վեր է հառնելու, վերընձյուղվելու է ճամփեզրին բուսած ծաղկի նման ու ծաղկելու է... միշտ:

Այս գիտակցումով էր ապրիլի 24-ին Օդեսայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում ի մի եկել տեղաբնակ ողջ հայությունը:

Առավոտյան, ինչպես Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում ի Հայաստան, ի Արցախ և ի սփյուռս աշխարհի, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ևս մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ, որին ներկա էին տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, հյուրեր, հավատավոր հայորդիներ: Օրվա պատարագիչն էր տեղի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Աբգար քհն. Գըլըճյանը: Հընթացս Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ, օրվան պատշաճող և իմաստալից քարոզ խոսեց Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նաթան, եպս. Հովհաննիսյանը:

Նաթան Սրբանզանը և բարերար Խաչիկ Գրիգորյանը նորաօծ խաչքարի մոտ

Իր խոսքում Սրբազան Հայրն անդրադարձավ օրվա խորհրդին, մեկ անգամ ևս հիշեցրեց, որ քիչ հետո եկեղեցու բակում տեղադրվելիք խաչքար-հուշարձանը հավաստիքն է այն մեծ հարգանքի ու խոնարհության, որ դրսևորում է մեզանից յուրաքանչյուրը 1915 թվականի մեկ ու կես միլիոն անմեղ նահատակաց նկատմամբ, նաև շնորհակալություն հայտնեց բարերար Խաչիկ Գրիգորյանին

ազգանվեր ու շնորհակալ նախաձեռնության համար՝ վերջինիս թեմի անունից հանձնելով օրհնության և գնահատանքի գիր:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի խաղաղություն Մեծ եղեռնի անմեղ զոհերի հոգիների:

***

Օրվա երկրորդ կեսին, մեծաթիվ հավատացյալների ու հրավիրյալների ներկայությամբ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում տեղի ունեցավ նահատակաց հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանի օրհնությունը՝ ձեռամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի:

Օրհնության կարգից հետո տրվեց սիրո ճաշ՝ ագապե, որին մասնակցում էին ներկա բոլոր հավատացյալները:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ